


ՏՆՕՐԵՆ-ՆՄՔԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՆՓԻԱՐ

Նամակ կամ ուր եւ գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պալատ Մուրուր, ԳԱՅԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եգիպտոսի համար տեղիւն. ողջ դ. 80
» » վեցամսեայ » 50
Օտար երկիրներ տարեկան հրաւիր 25
» » վեցամսեայ » 14
Թղթատրի ծախքը խաբարու-
թեան վրայ է:

Խմբագրութեան ուղղութեամբ հա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր:

Ա.ՂԶԿԱՆ ԱՍՊԱՐԷՋ ՄԸ

Չգիտեմ ի՞նչ դառն բան մը կայ այն նա-
մակին վերջաւորութեան մէջ զոր մեզի գրած
է քսանըհինգ տարեկան աղջիկ մը:

«Այնպէս վրայ ոչ ոք չէր, լքուած
եմ և յուսահատ: Եթէ կացութիւնս չի կըր-
նամ բարոյեղ այս քանի մը ամիսներուն մէջ,
վարժուհի պիտի ըլլամ»:

Այս «վարժուհի պիտի ըլլամ»ը այն ազ-
գեցութիւնը կընէ վրաս ինչ որ պիտի ընէր
բարեկամի նամակ մը որուն վերջի բառերը
ըլլային «անձնապաշտ պիտի ըլլամ»:

Կեանքէ ձանձրացած, յուսահատ, բարո-
յականը ջախջախուած մէկու մը համար կը
հասկնամ որ անձնապաշտութիւնը՝ ամբողջ,
փրկուէտ բան մը ունենայ իր մէջ: Բայց օրի-
որդին չպիտի ներէի որ վարժուհի ըլլալը նը-
կատէր իրեն լաւագոյն դարման մը իր վիճա-
տած հոգւոյն և անոր մէջ փնտռէր ամբողջ
մը իր տարաբաղդ կացութեան:

Ընդհակառակը. տկար, ջլատ ու խան-
գարուած կազմութիւններու, յոգնած և մաշ-
ուած միտքերու յատուկ ասպարէզ մը չէ վար-
ժուհիութիւնը:

Ապահովապէս իրենց վիճակէն դժգոհ,
սիրահարէ մը լքուած և ամուսինէ մը չար-
չարուած աղջիկները կամ կիները չեն որ լա-
ւագոյն վարժուհիները կրնան ըլլալ:

Վարժուհի ըլլալը բանաստեղծութիւնով,
անուշ զգացումներով, յանկուցիչ պարագա-
ներով լեցուն ասպարէզ մըն է, որուն մէջ միտ-
նալու համար անխախտ հաւատք մը, անսակ
մը փառասիրութիւն և պայտօնին բարձրու-
թիւնը դնահատելու կարողութիւն ունենա-
լու է աղջիկ մը կամ կին մը:

Ճշմարիտ վարժուհին, այդ արուեստին
կոչումը ունեցող վարժուհին իր խնամոցը
յանձնուած տղոց համար ունեցած սիրոյն մէջ
մխիթարութեւն է, և բերկրութիւն մը, հեշ-
տանք մը զգալու է զանոնք սիրելուն և անոնց-
մէ սիրուած ըլլալուն մէջ:

Ես վարժուհի մը դիտեմ որ կը խոստո-
վանէր թէ մանկական շրթներու վրայէն ի-
րեն ուղղուած ժպիտներուն մէջ անանկ երա-
նութիւն մը կը գար որուն երեք դիտակից
չէր եղած դպրոցէն դուրս:

«Տասնըջորս տարիէ ի վեր գպրոցներու
մէջ կեանքս կանցընեմ, կրտսեր նամակի մը մէջ,

և եթէ երբեք բաղդին մէկ անանկալ հար-
ուածով հարուստ ըլլամ, դարձեալ պիտի
մնամ ինչ որ եմ» պարզ վարժուհի մը: Չէր
գիտեր ոչքան հաճոյք կը գամ այդ մանուկ-
ները գգուելու, կրթելու և ուսուցանելու մէջ.
աղքատ աղջկան մը համար աղկէ աւելի նա-
խանձելի դերք մը և մխիթարութիւններով
լեցուն վիճակ մը չեմ տեսած»:

Ամուսնանալուն վրայ քիչ հաւատք ու-
նեցող աղջիկներէ դուրս կուգայ մեր գա-
տիարակուհիներու դասը. այսինքն անոնք՝ որ
արդէն տեսակ մը զղուանք զգացած են կեան-
քէ և անոր դէմ վճատած վրիժառութեամբ
է որ ներս կը մտնեն դպրոցին սեմէն, ապա-
գայի բարոյութեամբ մը, լաւագոյն օրերու հա-
ւատարմութիւն մը չէ որ կը փնտռեն անոր
մէջ: Եւ ահա ինչո՞ւ նշանաւոր վարժուհիներ,
առաջնակարգ դաստիարակուհիներ չենք ու-
նեցած և գուցէ ասկէ ետքն ալ չունենանք
մինչև որ ասոնք չզգան և չի համոզուին թէ
իրենք ալ ապրելու, վայելելու և ամուսնա-
նալու իրաւունք ունին, դրամատիքով, վա-
ճառականին և հարուստ արհեստագործին աղ-
ջկան պէս:

Գեղեցիկ ամուսնութիւն մը կարենալ ը-
նելու յոյսը, հաւատքը ունենալու են մեր
վարժուհիները երբ այդ ասպարէզը կը գըր-
կեն, մանաւանդ անոր համար որ, իրենք ու-
րիշներէ աւելի որոշ գաղափար մը կունենան
կենսապայքարին վրայ, աւելի տոկալ գիտեն
չի յաղորդած կեանքի մը դառնութիւններուն.
որովհետեւ իրենք աւելի լաւ տեսլակ մը
ունին և աւելի մարդ սիրտ մը — քանի որ
տղոց հետ կապին — և այս յատկութիւն-
ներն են որոնք պիտի փնտռուին մեր ապա-
գայ հարմեցունքներու վրայ:

Ահա՛ այս համոզումով է որ մեզի դրող
աղջկան պատասխանեցինք:

«Ոչ ոք կրնայ արգիլել ձեզի, օրիորդ,
վարժուհիութիւնը նկատել իրեն ապաստա-
րան մը բեկեալ սրտերու և անոր մէջ նետ-
ուիլ ինչպէս կը նետուին նեղուսի մէջ: Իսկ
եթէ կը ներքէր թր խրատ մը տանք ձեզի,
մենք պիտի յորդորէինք որ նեղորձնախնա-
րէք, որովհետեւ հոն դուք զձեզ կսպաննէք,
—ինչ որ ձեր իրաւունքն է— բայց վարժու-
հի ըլլալ, ձեր ըմբռնած եղանակով, ձեր
խնամոց յանձնուած մանուկներուն կեանքը
թունաւորել է, մեղք մը որ ձեր փափուկ ձեռ-
քերով գործուելուն համար չէ որ արդարա-
նալի կրնայ ըլլալ»:

ՄԻՐՈՅ ՈՒ ՄԱՀՈՒՍՆ ՇՈՒՐՋԸ

(Ն Ո Ր Ա Վ Է Պ)

Աւելի նոր ամուսնացողի քան հիւանդի սենեակ
այդ սենեակը: Ճերմակ բեհեզէ թափանցիկ վարա-
գոյրներ, ծոպաւոր լայն կապերու մէջ ամփոփուած
թուրքին, կարողեն երկար պատուհանները որոնցմէ
ապրիլի առտունն մը պայծառ լոյսը կը մտնուի թե-
րեղացած: Ճերմակ բաղնիքի մը վրայ, ձեպ ձերմակ
մազերով մայրիկը նստած է, ոչինչ փայլուն կրա-
կարանի մը ժող ուր ամուսնի կը մտնուի: Անկիւն մը
ձերմակ շղարչներով պատած՝ հիւանդին անկողինը:

—Դամը քանի՞ն է:

Մահճին փակ վարագոյրներուն ետեւէն հիւան-
դին ձայնը կը լսուի, հատուածին նրբացած, ժողա-
ւոր մահճին հրեշտակացած, արծաթէ թիթեղի մը
թրթռումով:

—Ի՞նչ ոտքի կեցայ: Վարագոյրները մէկ
կողմ կառնէ ու կը պատասխանէ, անձկութեամբ աչու-
նեղով դիտելով անոր դէմքը:

—Դեռ ժամը ութ չի: Ե:

Հակառակ վեց ամսուան երկար ու չորհրդոյ
հիւանդութեան մը, որու անցյալ վերջապահը արդէն
առաջուց գուշակած էին թիթեղները, հիւանդին դէմ
քը անբացատրելի անուշութիւն մը ունի, աշխարհէ
արդէն անջատուած գեղեցկութիւն մը, որ կապույտ,
ապրիլի այդ պայծառ առտունն պէս կապույտ աչ-
ուներով Յաւիտենականին կը յոտի: Բարակ շրթ-
ները նորէն կը բացուին, գունատ շրթները նորէն կը
չարժին, ու ձայնը, կարծես հեռուէր, նորէն կը
թրթռայ:

—Թիթիկը ինչո՞ւ ուշացու:

* * *

Երեսունըհինգ տարեկանի մօտ է ան ու չէ ա-
մուսնացած մինչև այդ տարիքը՝ հակառակ թեկնա-
ծուներու երկար շարքի մը, վախճանով շատ փոր-
ձուած ամուսնական յոսանքներ կապուած իրենց
և իր աշխարհիկ կեանքին մէջ մենարանի կրօնուհի-
ներէն շատ աւելի խառնակաց կեանք մը անցընելով:

Ու այդ ծայրայեղութեան հասած միեւնոյն ըզ-
գացումը, թող չտալով հիւանդութեան առջի օրե-
րուն մէջ, բռնիկ մը կամքին յանձնել իր մինչև ան
ատեն ամենքին ծածուկ պահած գեղեցկութիւնները,
պատճառ դարձած է այդ տխուր վերջաւորութեան:

Հիմա որքան փոխուած է սակայն անիկա, իր
վերջի օրերուն գիտակից, մինչև ան ատեն խորացած
ու արհամարհած զգացումին յանձնած է ինքզինքը,
կարծես տխուր աճապարանքով մը ու տենդոտ ան-
համբերութիւնով: Հիմա ալ չմտածք իր մահուան
վրայ, անբաղդութեամբ լեցուած այն խենդ սիրովը,
մահուան անկողինը շուրջը եղբական, զոր իրեն
կաղզէ իր երիտասարդ բոխիկը: Ամբողջ կեանքը
անոր այցելութիւններուն մէջ կեդրոնացած է, տու-
նէն ներս մտած պահուն սկսելով օրը ու հեռանա-
լէն ետք գիշերուան խառնարը:

Երեւակայական ցուեր կը հնարէ երբեմն, կա-
րելի եղածին չափ երկարելու համար անոր սիրելի
տեսքը, ու զգալու համար իր կործանի վրայ անոր
խնամուած, գրեթէ կնոջական սպասելուն փայփա

Ա Յ Ժ Մ Ե Ո Ւ Թ Ի Ւ Ն

ԳԵՐՄԱՆԻԱ ՈՒ ԱՌԱՍՏԻԱ ԿԵ ՔԱՇՈՒՆ

Գերմանիա իր գործերը հեռացուց Կրե-
սենեկ եւ, ինչպէս դիտարկելու եր գործակեր, Աւս-
տրիա ալ կը հետեւի անոր օրինակին: Ըս-
տեւեանքին, երկու մեծ պետութեանց այս
անակնկալ որոշման շարժառիթն է՝ իրենց
ձեռնարկութեանը Եւրոպայի իշխանին ըն-
դունդութեան խնդիրն մէջ, ազատ ձգելու հա-
մար Եւրասիական դաշնակցութիւնը եւ Անգ-
լիան իրենց ուզած եղանակով կարգադրել
գայն: Բայց իրապէս, մեկէ աւելի նպատա-
կակէտներ կը վերագրուին անոր: Նախ, ան-
յայտնութեան մասին հեղեմական փոխա-
ռութիւնը որուն քուղիները հրապարակ կը
հանուին այս օրերս, Անգլիոյ, Ռուսիոյ եւ
Ֆրանսայի երաշխաւորութեանը, եւ հետե-
ւաբար յայտնեցնել քուրճ գործերուն թե-
ւաքային հեռացումը որ կախում ունի պա-
ստաւանական տոգորման վճարումէն: Յետոյ,
եւրոպայի իսկ ու երկրակալ ճամբով
սրտելիք այս հարաւոր խորհուրդն ապա-
ռած արդիւնքը յունեանայ, Պերլինի ու Վի-
եննայի դաշինքներն աղէկ գիտեն թէ իրենց
հեռացումով՝ կրեական խնդիրը յոծման
մը մօտեցանք տեղ աւելի կը կենդանան: Եւս
միամիտ ըլլալու է կարծելու համար թէ,
ինչպէս Թան դիտել կուտայ՝ արեւելեան գոր-
ծերուն վերաբերող իր վերջի մեկ խնդ-
րական մէջ՝ ինչ որ Սուրբանը մեր-
ժեց Եւրոպայի գոնէ արտաքին միաձոյն
պահանջներն առջեւ, պիտի ընդունի երբ վեց
մեծ պետութեանց ներդաշնակութիւնն այս-
քան ակնհայտ կերպով կը փայտայ ու եր-
կուրդը դաւաճի կըլլան:

Ամեն առեւտրային հիմն մանաւանդ
կանխահաւ է ուրեմն ապաւել որ Անգլիա,
Ռուսիա եւ Ֆրանսա յայտնին Յունաստանի
փոյր կողմին պահանջած ինքնօրինութիւնը
ձեռք ձգելու Եւրոպայի իշխանը կառավարի
անուանել սալ: Եթէ գոնէ Ռուսիա յարա-
կերպով փարած ըլլար այս կարգադրութիւն-
ներուն ու իր ճայնը գործառն կերպով շեշ-
տալ ուզէր Դրան մօտ, իսկող կրեականները
թերեւս յոյսի պզտիկ նշոյլ մը պահէին, միեւ-
նեւ Թուրքիոյ նկատմամբ իր ցոյցած հա-
ճոյական արարութիւնն ու փառնակականութիւն-
ները այդ յոյսն ալ կը ջնջեն:

ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՑԻՆ ԵՐԵՎԱՆԻ

Բանաւե երեկոյթ մը երէկ գեղեցիկ
Քալիֆօրնիոյ հաւաքում մը ուր գեղեցիկը եւ
տղեղը, նորաճաշակը ու այլանմանը, ֆրաքը ու կէշ-
պիւն, անգլիացի աղետակները եւ աղետով պէրպէսի-
քովէ բով, իրարու քով, իրարու վրայ գեղեցիկ
Եւրոպայիցը կը բացուի, ինքզինքը Սուր-
բանին, Այսօրն մէկ անկիւնը, Քեռահատհանէյի մէկ
ծայրը կը գտնեն. դարձուր կանակը եւ գիմարդ ու-
նիս չուշանալովոր անգլուհին, կէս թուրքիկ կէս
երեկոյթի արգելադրութիւն, եգիպտական իշխանը cor-
rect ինչպէս անոնք գիտեն ըլլալ, շնորհալի արմ-
նուհինքուն հոյ մը աստիկ անգլին սփռուած որուն
մէջ կը նշմարեն գեղեցիկ աշուին, ծիծաղկոտ բուս-
տէ չրթներ ունեցողը, կէս տէրօրթին եւ լըծօրէն
բուսալիք զը վիլ կրողը, ժամի խնդիրներով սէրիէ-
զման խօսակցողը, գեղատեսիլ նորահարը, խըն-
դուներն պատաւը, առաջին անգամ երեկոյթի մը

ներկայ գտնուող երիտասարդը որ կը նեղուի իր
փերճի կոշիկներուն մէջ, endimanché էսմաֆը,
ձանձրացող mondaine, իր աղամանքները ցուցա-
դրող նախկին en robe de chambre դիտահագեցող,
ձանձրարարող վաճառականը եւ թեթեւալիկ պաշ-
տօնեան, խածնող բոյց ակտաները թափած մեծ
մարդը, զպրոցական աղջիկը, ծիծաղող մանուկը եւ
հիացումով ապուշացած պատանին:

Տարբեր տարրեր, տարբերակ դէպքերու եւ ա-
նօրինակ տղայներու անսովոր կուտակում մը որ
չի գտնեցներ, իրաւ, բայց երազել կուտայ:

Գեղեցիկագիտական տեսակէտով, յայտագիրը
կրնար բնադատութեան մը նիւթ մատակարարել,
բայց մի և նոյն ատեն ներքէ ալ գիտնալու ենք Ըն-
թերցասիրաց ընկերութեան կարգադրի մասնախումբ
ըին որ տարբերու. պակասութեան մէջ լուսագոյնը
չէր կրնար ընել հակառակ իր բարկամեցողութեան
եւ թափած ջանքերուն:

Բայց երեկոյթին clouն կը կազմին ապահո-
վալէս Տիկին Վիլիամին Նուարդի երեք երաժշտա-
կան կտորներ որ փրկեց —ըսելիք չկայ— ան թոյլ
տպաւորութիւնը զոր ճաշակի տէրերը կրնային կրել
աճապարանքով և տեսակ մը մեղմութեամբ պատ-
րաստուած յայտագրի մը գործադրութիւնն:

Տիկին Նուարդ մեզի անծանօթ չէր և շատ
անգամներ առիթ ունեցած ենք մեր անկեղծ շնոր-
հատութիւնները իրեն ընելու իր գեղեցիկ ձայնին,
և երգելու արուեստին մէջ ունեցած վարպետու-
թեանը համար:

Բայց երէկ գիշեր, Չուհաճեանի այդ վարպետ
աշակերտութիւն, très en voix, պարզապէս furœur
ըրաւ, մանաւանդ Պարպիկ Տը Սեվիլի Արիան մէջ:

Մէկէ աւելի երիտասարդներ —հասկցող կարգէն,
չի մոռնա՞ք— տեսակ մը հիացումով և անկեղծ հա-
մակարանքով գնահատեցին մեր հայ երգչուհին
և թերեւս անոնք եղան ամենէն ջերմ կերպով ծա-
փահարող այդ հայ étoileին:

Եւ շատերը ցաւ յայտնեցին թէ փառաւոր ծաղ-
կեփունջ մը չի կրցան տալ իրեն, մոռնելով թէ
այդ համակրանքի և գնահատման արտայայտումը
արդէն հայերը պատրաստուած ըլլալու էին:

Հայ թատերական խումբը անթերի կերպով
և խղճմտանքով խաղաց այն կտորները որոնք ուզ-
ուած էին իրմէ:

Թէ՛ Զընկերաբէ թէ Զօր Նիքիտանը և թէ Զեյ.
պիւնները այնքան անգամ տեսնուած ու լուսած
բաներ են որ աւելորդ կը համարինք անոնց վրայ
խօսիլ:

Մասնաւոր յիշատակութիւն մը պէտք է ընենք
Տիկին Մարի Պէրլինի համար որ Զեյպիւններու այդ
արարուածին մէջ գուարթ, հանձնի ինք մը կը դնէր
իր փառնուրէն շարժումներով: Եւ երբ վերջի տե-
սարանին մէջ գէշալէքի առնական հազուատով բնմին
վրայ կերեւի, անգլին մարմաւ մը կուտայ այդ
նրբիւրան գէշալէքին հանդիպելու ամայի լեռան մը
զագաթը, անթափանց անտառի մը անկիւնը և կամ
քարայրի մը մէկ խոռոչը:

Այս ամպաւոյ գրուած նկարագրութիւնը վեր-
ջոյցներէ առաջ չենք ուզեր նաեւ մոռնալ Պ. Է.
Սանթիանին որ քաջ կերպով ընկերացաւ դաշնակի
վրայ Տիկին Վիլիամին Նուարդի:

Շնորհակալութեան արժանի է այդ պատուա-
կան երիտասարդը որ երբեք իր աշակերտութիւնը չէ
զրացած ամեն անգամ որ զիմում եղած է իրեն
բարեգործական որ և է մէկ հանդէսի մէջ իր ան-
հրաժեշտ աշակերտութիւնը նուիրելու:

Հանդէսին նիւթական մասին գալով կը կարծենք
թէ ընկերութիւնը դժգոհ ըլլալու չէ գոյացած հասոյ-
թէն որով տարի մը եւս պիտի մատակարարուի այդ
հաստատութիւնը:

ԹԱՏԱՄԷՍ

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսոյ գերմանական դեսպանատան
գլխավորական կցորդը վերջին օրերս Սուլթա-
նին ներկայացած ըլլալով, այդ ունկնդրու-
թեան հետեւանօք որոշուեր է պատեւազմա-
կան երկաթուղիի մը շինութիւնն ի Տարտա-
նէլ, Ռօտսօմօյէն Կէլլպօլսու: Այս ձեռնար-
կութեան հարկաւոր դրամագլուխը հայկա-
յան

յանքը որ զինքը անծանօթ հեշտանքներով կը լե-
ցնէ և կենսագործի երակներուն մէջ երանութեան
գերագոյն հոսանքները կը վազցնէ:

—Բժիշկը ինչո՞ւ կուշանայ:

Պարոյկ ոտնաձայն մը սանդուխներուն վրայ լուս-
բախել կուտայ անոր սիրտը և վաղանցիկ կարմիր
մը կը բերէ այտերուն վրայ:

—Բժիշկն է:

—Չէ, կարծեմովա՞նք էր:

Ու գլուխը նորէն վառ կիցնայ յուսահատ, բար-
ձին վրայ, աշուրները կը գոցուին և սպասումը կը
վերակսի:

Մայրիկը դուրս կը նայի վայրկեան մը պատու-
հանէն: Սխալ կարելի է որ մարդ մեռնի այդ վեր-
կապոյտին տակ, բնութեան ընդհանուր վերանորո-
գումին ատեն:

—Դուռն է:

Պարոյկ հայելիի մը մէջ ինքզինքը գիտնալու,
մազի քանի մը թելեր շտկելու ժամանակը, ու բը-
ժիշկը ներս կը մտնայ:

Երեսուն տարեկանի մօտ, վերջին ծայր խնամ-
քով հագուած մարդ մըն է, նոր ամիսը ամ երեսով,
դեղին պէսիւնով, գորշ աչքերով:

Հիւանդը անկողինն մէջ նստած է հիւս, դէմ-
քին վրայ անրայատրելի երջանկութիւնով մը, ու
տղու մը պէս կը շատախօսէ:

—Տօբթօ՞ր, չէ՞ր գիտեր որքան սպասեցինք ձե-
զի առտուընէ ի վեր:

Ու յանկարծ, անձկութեան շեշտով մը, կապոյտ,
գորովատ, աշուրները բժշկին աչքերուն յատելով:

—Պիտի ապրի՞մ գոնէ քանի մը շարաթ, անտիկ
չէ՞ տօբթօ՞ր:

Բժիշկը կապահովցնէ զինքը թէ բնաւ վտան-
գի մէջ չէ, ու ան կը հաւատայ:

Պարոյկ քննութեանէ մը, քանի մը պատուէրներէ
ետք ոտքի կ'ելլայ:

—Կերթա՞ք կոր տօբթօ՞ր . . .

Ու շեշտին մէջ անգիտակից խոստովանանքը
կայ ամբողջ իր սիրտին:

Դուռը կը գոցուի ցաւագին ճանչումով մը, մայ-
րիկը բազմոցին անկիւնը կանցնի ոտքին ծայրերուն
վրայ կոխելով անընդուն և պղծաբէ փրկուած կրակա-
րանին մէջ ամուսինները կը մոխրին, կը մոխրին:

* * *

Բարձր պատուհաններէն, արշալուսին գորշ ցու-
քերը ներս կը մտնեն վախկոտ ստուերացածութեան
լուս: Սենեակը կը լեցուի տարտամ մանիչակազոյնով
մը որ ձերմակ կարասիներուն վրայ իւր անհշուարելի
ծաղիկէ փոշիները կը պտտեցնէ:

Ջգնածամի գիշերուան մը առտունն է: Դաւա-
րող տաքնապէ մը ետք հիւանդը հիւս իր տառակ
գլուխը կը հանգչեցնէ բարձին սպիտակ ժանեակնե-
րուն վրայ:

Անկիւն մը մայրիկը կը բարտայ բժշկին հետ.
նոր եկած ու ձայնի անխելի միմունջը օրհասականի
այդ մահճին շուրջ, արշալուսի տխուր ստուերներուն
մէջ, արհաւիրքի խորհուրդը կանչէ, կենսաբերուն որ
պիտի մարին:

—Մայրիկ . . .

Մահու խաւարին մէջ օրօրանին կոչը կուգայ կը
խառնուի. ու ձայնը վերցուցումի շեշտը ունի ան-
դառնալիքին:

Մայրիկն ու բժիշկը անկողինն գլխուն վերեւ
են, բայց ան չնայի անոնց, կասկած, անհունին պէս
կապոյտ աշուրները յառած, երազումի սեւեռումով,
պատուհանին ուր կը կարմիր արշալուսը:

—Տօբթօ՞ր . . .

Ջեպերը անոր ձեռքերուն մէջն են, աշուրները
անոր աչքերուն մէջ նոյն երազով համակուած:

Վայրկեանը կերկարի, լոյսը կը ձերմկի:

Արտեւանունը կը ծանրանան, կը ծանրանան
ու թարթիչներուն անխելի մետաքսին տակ կը վա-
րագուրուի սիրոյ առաջին ու վերջին երազը:

5 Մարտ 98

ԼԵՒՈՆ ԱՐԱՄԵԱՆ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅՐԸ ՈՐ ԿԱԶՄԱԿԵՐԱՎՈՒԹՅԱՆ ԵՐ
Ի ՆԱԿԱՍԱՆ Պ. Ե. ՊԵՆԵԿԱՆԻ, ՏԵՂԻ ԱՅԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ ՎԱ-
ՊԵՐ ԳԻՏԵՐ, ԿԻՐԱԿԻ, ԺԱՄԸ ԳԻՆ, ԱՎՈՒ ԽԱՅԻԼ ԲԱՍ-
ՐՈՅԻՆ ՄԵՋ:

թելու համար՝ գերմանացի դրամատերերուն կողմէ պիտի ըլլուի :

— Սուլթանին հրամանով՝ յանձնաժողով մը կազմուեց է առեւտրական ու երկրագործական նախարար Սէլիմ Մէլհամէ էֆէնտիի նախագահութեան տակ , որ պաշտօն ունի հարկ եղած նախապատրաստութիւնները տեսնել Գերմանիոյ կայսեր ըլլալէ ընդունելութեան համար , երբ յառաջիկայ նոյեմբերի սկիզբը Պաղեստինէ վերադարձին Կ. Պոլիս այցելէ Վիլհէլմ Բ. Երկրորդի դարաստանին մէջ երկու հոյակապ քէօշկեր պիտի կառուցուին , մէկ միլիոն ֆրանք ծախքով :

— Մարտիկոյ սուրհանգակով առնուած եւրոպական թերթերը Կ. Պոլսէ հեռագիր մը կը հրատարակեն ծանուցանող թէ մարտ 15ի օրը մեծ յուզում սիրեր է երկրորդ պալատը , ալպանիացի զօրքերուն մէջ ծագած չփոթութեան մը պատճառաւ , որոնց զօրանոցն իսկոյն պաշարուեր է : Հեռագիրը կը յարէ թէ շարժառիթը քիւրտերու և ալպանիացիներու միջեւ ծագած կռիւ մըն է եղեր . բազմաթիւ ձերբակալութիւններ կատարուեր են ու հանգարտութիւնը վերահաստատուեր է :

— Սըր Ֆիլիք Բըրքի , Կ. Պոլսոյ անգլիական դեսպանը , ծանուցեր է Դրան թէ բրիտանական կառավարութիւնը չընդունիր որ Թուրքիա միջամտութեան որեւէ իրաւունք ունենայ Խոփվէյի շոգենաւներու վաճառման գործին մէջ :

— Սէլանիկէ կը հաղորդեն Վիլհէլմայի թերթերուն թէ Աթոս լեռան (Այնորոզ) երեք վանքերու կրօնաւորներ ըմբոստեր են Կ. Պոլսոյ Յունաց Պատրիարքին դէմ , յայտարարելով թէ Յենէրի Պատրիարքարանն օրինաւորապէս ի գործ չի դնել իր իրաւասութիւնը : Միւս տասնըջորս վանքերը չեզոք կը մնան : Հաւանական է սակայն որ խնդիրը հաշտարար կերպով կարգադրուի և Պատրիարքը ետ առնէ ըմբոստ կրօնաւորներուն նկատմամբ իր սահմանած պատիժը :

— Մէյն գրահաւորին պայթման պատճառաւ Սպանիոյ ու Ամերիկայի միջեւ ծագած հակառակութիւնը պատերազմի մը յանգեալու երկիւղ չի տար առայժմ : Միացեալ Նահանգաց նախագահը , Մաք Բիլլս , յայտարարեր է խորհրդարանի կուսակցապետներուն թէ ինք հաստատապէս միտքը դրած է խաղաղութիւնը պահպանել՝ որչափ որ կարելի ըլլայ : Միւս կողմէ կը հեռագրեն Վաշինկթընէ , թէ հանրային կարծիքը խորապէս ազդուած ու գրգռուած է Բուլպայէն առնուած տխուր լուրերէն , և թէ ամերիկեան միջամտութիւն մը կը պահանջէ ի նպաստ այդ կզգի տառապեալ ժողովուրդին :

— Լորտ Սոլպսբերի առողջական վիճակը լաւագոյն է . Անգլիոյ նախարարապետը այսօր օդափոխութեան կերթայ : Ռիւդէրի հեռագիր մը կը հերքէ անոր հրաժարման վերաբերող զրոյցները :

— Իտալիոյ խորհրդարանը բարոյական ծանր հարուած մը տուաւ Պ. Բրիսքիի , մեծամասնութեամբ հաստատելով տեղեկագիրն այն յանձնաժողովին որ պանքաներու գայթակղութեան գործին մէջ նախկին նախարարապետին աննպաստ եզրակացութեան մը յանգած էր . խորհրդարանը մերժեց սակայն Պ.

Բրիսքին դատի ենթարկելու առաջարկը : Պ. Բրիսքի հրաժարեցաւ երեսփոխանութենէ , բայց դիւրաւ յաղթուող մարդ չըլլալով՝ վերջապէս ընտրելի պիտի ներկայանայ նոր ընտրութեանց ատեն :

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Պատ. Երեսփոխանին նամակը , զոր հրատարակեցինք նախորդ թիւով , հաւանութեան արտայայտութիւններ առաջ բերած է նաեւ ոչ-երեսփոխանական շրջանակներու մէջ : Փառնալի բարեկամ ծանօթ ազգայիններ տրամադրութիւն կը ցուցնեն հանրագիր մը պատրաստել , Առաջնորդարանի կողմէ մեզ փոխարուած սպագորական մամուլին վաճառման խորհուրդին դէմ բողոքելու համար : Մեր շնորհակալութիւնը յայտնելով հանդերձ այս համակրական զգացումներուն համար , կը յայտարարենք թէ մենք հաւատք ունինք ընդհանուր ժողովոյ անկողմնակալ դատաստանին վրայ , հետեւաբար առ այժմ ուրիշ որեւէ դիմում կանխահաս կը նկատենք : Կացութիւնը կը փոխուի սակայն , եթէ մեր հակառակորդներուն կողմէ , ըստ իրենց բարի սովորութեան , նոր մեքենայութիւն մը սարքուի մեքենային շուրջը , խնդիրը ընդհ. ժողովին սեղանին վրայ չի դնելու համար :

Բագուի Հայոց Մարդասիրական ընկերութեան 1897ի հաշիւներէն կերեւայ որ այդ տարուան սկիզբը ընկերութեան շարժումն ու անշարժ ստացումներն գումարն էր 304,095 ռուպլի : Նոյն շրջանի միջոցին , մուտքը եղած է 25,836 ռ. և ծախքը՝ 21,421 ռուպլի :

Նիւ-Եօքքի Հայ հանդէսը վերջին թիւին մէջ կը յայտարարէ թէ իր բաժանորդաց թիւը որ անցեալ տարի 225 էր , ներկայ տարւոյ փետրվարին 81ի իջած է :

Ն. սակայն դիտելի է թէ 87էն 88՝ Ամերիկայի հայ գաղթականներուն թիւը ոչ թէ նուազած է , այլ բազմացած : Ի՞նչ բանի վերաբերել ուրեմն ութ տարիէ ի վեր հրատարակուող թերթին այս անկումը : Տիգրիսին ու Եփրատին հոսանքները այդքան զօրաւոր եղած են արդեօք :

Ֆիկաւոօի մարտ 17ի թիւին մէջ կը կարդանք թէ Բարիդի հայ ուսանողաց միութիւնը գրական և երաժշտական երեկոյթ մը տուեր է Էնթիթիլի Շարաի սրահին մէջ որուն մասնակցեր են ականաւոր ֆրանսացի գրագէտներ և արուեստագէտներ , ինչպէս՝ Տիկնայք Սըլվեն-Վէպէր և Ժան Տիւր , Պ. Պ. Բօլ Մունէ , Մունէ-Սիւրի , Սիւլէն , Ժան Ռամօ և այլն :

Յայտագրին գրական մասին մէջ կը գրենք Արչակ Զօպանեանի և երաժշտականին մէջ՝ Վահրամ Սըլվանեանի անունները :

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Գահիրէի շուրի ընկերութեան բաժնետեարց տարեկան ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ այս չորեքշաբթի օր , ընկերութեան կեդրոնատեղին : Հաշիւները միաձայնութեամբ վաւերացուելէ ետք , որոշուեցաւ հետեւեալ չահաբաժինները տալ . 24 ֆրանք՝ սովորական բաժնեթուղթերուն , 19 ֆրանք՝ աֆսիօն

ՏՐ ԺՈՒԽԱՆՆԱ ԿՈՇՈՒՄ ԲԱԺՆԵԹՈՒԳԹԵՐՈՒՆ և 115 զրոյ հիմնագրի լսածիններուն :

Վարչական խորհուրդի անդամներէն Նուպար փաշա և Պ. Ֆիլիք Սուարէզ , որոնց պաշտօնավարութեան շրջանը լրացած էր , վերընտրուեցան : Պ. Ռօքրատէրի տեղ որ հրաժարած էր նոյն ժողովոյ անդամակցութենէն , ընտրուեցաւ Պ. Է. Մանուր :

Այս տարի ընկերութեան զուտ շահը եղած է 74,184 ոսկի , նախորդ տարիէն 783 ոսկի աւելի : Թէ՛ այս պարագան և թէ՛ շուրի յարաճուն խնդրանքները յոյս կուտան նիւթական բարգաւաճ վիճակ մը այս կարեւոր հաստատութեան համար :

— Բարձր. Խոփվէյ իր կալուածներուն կից գտնուած ընդարձակ հողեր գնած է :

— Նախարարաց խորհուրդը իր հինգշաբթի օրուան նիստին մէջ վաւերացուց բժշկական վարժարանին ու Բար-է-Ս. Նի հիւանդանոցին վերակազմութեան ծրագիրը , Տոքթ. Բէրրիի ծրագրին համաձայն :

— Սիւէզի ջրանցքի ընկերութիւնը որոշեր է յառաջիկայ մայիսի սկիզբը 420 դորժաւոր ճամբել :

— Ելմտական խորհրդականին կինը , լէտի Բալմըր , երէկ Անգլիոյ ուղեւորեցաւ :

— Յիսունի չափ գերմանացի դոսաչըր-չիկներ երուսաղեմէն Եգիպտոս եկան առջի օրը :

ՃԻՏՏԵԻ ՄԷՋ ԺԱՆՏԱՒՏ

Ճիտտէի մէջ ժանտախտի նմանող կասկածելի դէպքեր պատահած են : Եգիպտոսի առողջապահական ժողովոյ հինգշաբթիի օրուան նիստին մէջ՝ օսմանեան պատուիրակն հաղորդեց այս տագնապալի լուրը , Ճիտտէի քարանթինայի քննիչէն ստացած մէկ հեռագիրը ցոյց տալով : Ներքին գործոց նախարարութիւնը իսկոյն հեռագրաւ հրահանգ տուաւ բոլոր կառավարիչներուն՝ որ իրողութիւնը իմացունեն մեկնելու պատրաստուող ուխտաւորներուն :

Դիւրին է գուշտել թէ հնդկական ախտին Պոմպէէ Ճիտտէ փոխանցումը մտահոգութիւն պատճառէ Եգիպտոսի ժողովուրդին . բայց , ինչպէս տեղական ամեն թերթեր ալ կը յայտարարեն , անմիջական վտանգի երկիւղ չիկայ . անցեալ տարի ալ , այս ատեն , նոյն բանը պատահեցաւ , բայց ահաբեկի համաճարակը իր ծագման կեդրոնին մէջ մարեցաւ . բռնուողները հնդիկ բռնակիրներ ու նաւավարներ էին միայն : Թուրքիա , քարանթինայի մասին , ամենախիստ միջոցներ ձեռք կառնէ , ամեն հաղորդակցութիւն արգելելով վարակեալ երկրին հետ . Եգիպտոսական կառավարութիւնն ալ ոչ նուազ զգուշական տնօրինութիւններ պիտի ընէ բնականաբար Յետոյ , դիտելի է որ ծանուցուած հիւանդութիւնը ոչ թէ ժանտախտ է , այլ ժանտախտի կասկած տուող հիւանդութիւն մը :

Վերջին պահուն Կ. Պոլսէ հասած Հաւսի հեռագիր մը կը ծանուցանէ թէ առողջապահական վարչութիւնը որոշեր է արգելել որ հնդիկ ուխտաւորներ չընդունուին ի Մէքքէ :

ՀԱՅԻ ՄԸ ՀԱՄԱՐ

Եթէ ոչ Զօլի կամ Բանամայի դա-
տերուն չափ, գոնէ անոնցմէ աստիճան մը պա-
կաս կարեւորութեամբ՝ բարիքեան մասնուր
կը զբաղի այս միջոցիս դատաւճռով մը որ կը
վերաբերի... հացի մը գողութեան : Կարծէր
սակայն, ընկերային տեսակէտով :

Այրի կին մը, Շաթօ-Թիէռի մէջ, որ իր
զաւկըները անուշանելու հազիւ կը բաւէր, օր
մը՝ զանոնք անօթութեան մատնուած տեսնե-
լով՝ մօտակայ փողէն հաց մը կը գողնայ .
փռապանը, իրողութիւնը իմանալով, կուգայ
կը հանի և դրամը կը պահանջէ. կինը պայ-
մանաժամ կը խնդրէ, իր ձեռագործ մէկ աշ-
խատութիւնը վաճառելուն պէս հասուցանե-
լու համար, աւելցունելով միանգամայն որ զին-
քը իշխանութեանց չի յանձնէ : Փռապանը
հիշդ հակառակը կընէ :

Տեղւոյն երգուեալ դատաւորները, որոնց
ատենը կը ներկայանայ այս գողութեան
գէտը, անպարտ կը հռչակեն կինը, որովհե-
տեւ թշուառութեան ու անօթութեան հար-
կին տակ կորցած էր հացը : Ֆրանսական
թերթերուն մեծ մասը խմբագրականներով ու
մասնաւոր յօդուածներով կը գովեն այս վճի-
ռը . ուրիշներ կը քննադատեն, առարկելով
թէ Շաթօ-Թիէռի դատաւորները պէտք չէր
որ այսքան աղմկալի կերպով նուիրագործէին
գողութեան մը արդարացումը : Ընկերվարա-
կանութեան ու անոր հակառակորդներուն
միջեւ վէճի առարկայ ու օրուան խնդիր դար-
ձած է այս մէկ հացի գողութիւնը որ ժան-
վալթանը կը յիշեցունէ :

Շատ չափով զարմանաք եթէ օրին մէկը
իմանաք թէ Շաթօ-Թիէռի օրինակէն խրա-
խուսուելով, թաղականները ժամին ամբողջ
ստակները կլլեր են... ի Զմէկաժադ :

Ա. Զ. Դ.—Ի Ֆախալա Էմանուէլ Թօմսոնի նորա-
հաստատ խանութին մէջ միշտ պատրաստ կը գտնուի
կոֆի և ոչխարի միս : Թարմութիւն, մաքրութիւն եւ
աժանութիւն :



ՆՈՐ ՓՈԻՈ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՏԱՐԱՊԷԼ ԿԻՆԷՆԱ ՓՈԳՈՅ

Ա. Զ. Դ.

Ստորագրեալքս պատիւ ունինք ծանուցանելու
արգոյ հասարակութեան թէ ամսույս 1էն սկսեալ
գնած ենք Տարապէլ-Կինէնայի Հայկական փողոր
և թէ մենք պիտի շարունակենք այսուհետեւ անոր
գործառնութիւնները : Այդ փողորն գործելու եղա-
նակին մէջ խնամատ քարեկարգութիւններ ներմու-
ծած ըլլալով՝ կարող պիտի ըլլանք եւրոպական ունե-
փողոր մը պէս լիովին գոհացնել իրենց փառահա-
թեամբ զմեզ պատուող յաճախորդները :

Կը սիրենք յուսայ որ պատուական ազգայինք
զմեզ պիտի րաջալերեն մեր այս ձեռնարկին մէջ :

Ս. Զուրիկեան եւ Նոբար Հացագործեան
3—15

Ա. Զ. Դ.

Սաժուէլ Գուրաեան անուն երիտասարդը որ
վերջերս Լոնտոնէ վերադարձած է, պատրաստ է
անգղիերէն դասեր տալ թէ տեսական և թէ գործ-
նական փափագողը զիմեն Բարեգործական ընկե-
րութեան սրճարանը :
4—4

ՍԱՓՐԻՉ

ՕՇԱՆՆԷՍ ՊԷՅԼԵՐԵԱՆ

Բերայի ճարտար սափրիչներէն Օհաննէս
Պէյլէրեան որ մէկ ու կէս տարիէ ի վեր Գա-
հրէ հաստատուած է և մեծապէս գոհ թու-
ղուցած իր յաճախորդները, այս անգամ իր
նոր խանութին մէջ (Աթապա էլ Խատրա,
Թրամուէյի կայարանին դէմ) ամեն զիւրու-
թիւն ու հանգստաւետութիւն կընծայէ. մաք-
րութիւն, արագութիւն ու վայելչութիւն՝ թէ
ածիլման և թէ վարսայարդարութեան մասին :

ՖՈԹՕԿՐԱՖԻ ԷՓԻԲՄԻԷՆ

Ք. ՊԻԻՔՄԷՃԵԱՆ

ՇԱՐԱ ՄՈՒՀԱՄԵՏ-ԱԼԻ ԹԻԻ 120

Արհեստին վերջին կաարեւրագործու-
թեան համեմատ հաստատուած այս լուսանը-
կարչատան մէջ ամեն տեսակ լուսանկարներ
կը հանուին գոհացուցիչ գիներով :

Ամեն մեծութեան ԱԿՐԱՆՏԻՍԸՄԱՆՆԵՐ
10—10

PHARMACIE DE LA POSTE

ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱԻԱԳԵԱՆ

ԳԱՀԻԷ, ՓՕՍԹԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ. ՄԱՏԱԹԱՅԻ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ դեղատոմիկն մէջ յաճախորդ-
ները պիտի գտնեն եւրոպական բազմապէս գործա-
րանքներէն ընտրած իւրաքանչեւ դեղեր, չափաւոր գիներով :
Դեղագիրները ամենայն խնամք և ուշադրու-
թեամբ կը պատրաստուին :
Անգղիական և ֆրանսական սլէսիպիքներ :
Թարմ հանգալից ջուրեր, անուշահոտութիւնք եւն.
Բնական և մանրագիտական ընկուկներ :
Դեղատոմիկ կը յաճախեն հաց և օտարագործ ա-
նօթ քօղիները :
Բժշկական ձրի խորհրդածութիւնք ապրտապ
համար :
36—50

ԼՈՒԱՑԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻՉ

Մ. ՏԵՐ ՍԱՀԱԳԵԱՆ

ԺԱՌՏԷՆ ՌՕՒԷԹԻ, ՇՐԱՆՏ ԱՅԱՏԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԿԱՆՈՒԹԸ

ԿԸ ԼՈՒԱՑ ամեն տեսակ ճերմակիղէներ
ու հագուստներ. ԿԱՐԴԻԷ արանց և կանանց
շաղկիկներ, շրջագգեւտներ, կշն. մաքրութիւն,
ճշդապահութիւն, և խիստ չափաւոր գին :
7—24

Le Gérant: Dr. A. S. HAGOPIAN

Տպագրութիւն ՓԱՐՈՍ րազրի

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՆՈՅՑ ԵՐԹԵԻՆԿՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻԷՆ ԱՂԵՔՍԱՆԴԵՐՈՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Լստոն 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Կէս ուղ. 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.	Օմնիպ. 1 2 3 կորգ	Էքսորէս 1 2 3 կորգ
Գահիրէ	մեկ. 4 45	—	7 30	8 15	9 30	մեկ. 3 30	մեկ. 4 45	մեկ. 7 15	մեկ. 11 —
Պէնհա	ժամ. 8 —	—	7 49	9 32	10 15	մեկ. 4 47	մեկ. 5 29	մեկ. 8 32	մեկ. 12 35
Թանթա	մեկ. 11 28	—	8 30	10 30	10 55	մեկ. 5 45	մեկ. 6 7	մեկ. 9 30	մեկ. 1 44
	մեկ. 11 48	6 —	8 34	11 15	11 —	մեկ. 6 26	մեկ. 6 11	—	մեկ. 1 54
Տամանհուր	մեկ. 3 10	7 34	9 41	մեկ. 12 49	մեկ. 11 58	մեկ. 7 59	մեկ. 7 7	—	մեկ. 3 51
Աղեքսանդրիա	ժամ. 6 25	9 15	10 45	2 30	մեկ. 1 —	մեկ. 9 40	մեկ. 8 7	—	մեկ. 5 50

ԱՂԵՔՍԱՆԴԵՐՈՅԷ ԳԱՀԻԷՆ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Օմնիպ. 1,2,3 կգ.	Կէս ուղ. 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1 2 կգ.	Լստոն 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1 2 կգ.	Օմնիպ. 1 2 3 կորգ	Էքսորէս 1 2 3 կորգ
Աղեքսանդրիա	մեկ. —	7 —	7 15	9 —	մեկ. 9 20	մեկ. 2 30	մեկ. 4 15	մեկ. 6 15	մեկ. 11 —
Տամանհուր	—	8 6	8 58	10 2	մեկ. 12 14	մեկ. 4 13	մեկ. 5 15	մեկ. 8 6	մեկ. 1 9
Թանթա	ժամ. —	9 12	10 28	11 —	մեկ. 2 39	մեկ. 5 43	մեկ. 6 10	մեկ. 9 40	մեկ. 2 56
	մեկ. 6 15	9 16	11 20	11 5	մեկ. 2 49	մեկ. 6 30	մեկ. 6 14	—	մեկ. 3 6
Պէնհա	մեկ. 7 18	9 59	12 23	11 46	մեկ. 4 43	մեկ. 7 33	մեկ. 6 52	—	մեկ. 4 25
Գահիրէ	ժամ. 8 30	10 45	1 35	12 30	մեկ. 6 25	մեկ. 8 45	մեկ. 7 35	—	մեկ. 5 50

ԳԱՀԻԷ-ՍԻԻԷՉ

ՊԷՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԻԷՉ-ԳԱՀԻԷ

ԿԱՅԱՐԱՆՔ	Ա.Ռ.Ա.ՌՏ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ	Ա.Ռ.Ա.ՌՏ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ. 11 40	7 —	Սիւէշ (քարափ)	մեկ. 9 50	—
Պէնհա	ժամ. 12 28	7 48	՝ կայարան	—	3 30
	մեկ. 12 33	7 53	Խամախիա	մեկ. 1 20	7 5
Ջակադիկ	ժամ. 1 34	8 54	Ջակադիկ	ժամ. 3 7	8 53
	մեկ. 1 44	9 4		մեկ. 3 17	9 3
Խամախիա	մեկ. 3 40	1 —	Պէնհա	ժամ. 4 13	9 47
Սիւէշ կայարան	ժամ. —	5 —		մեկ. 4 17	9 4
Տօք (քարափ)	ժամ. 6 55	—	Գահիրէ	ժամ. 5 5	10 35